

# Ժողովուրդ

121  
(2601)

17 օգոստոսի չորեքշաբթի 2022  
տպագրության ԺԱ տարի

✉ ք. Երևան, Արմավյան 22ա/3 (0010)

☎ +374 10 546423

@ info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com


100 դրամ

## ՆԻԿՈՂ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 70



2018-ի նոյեմբերի 13-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանն Ազգային ժողովի բարձր ամբիոնից տաքսու վարորդների ականջների համար բավական շուրջ հայտարարություն էր անում. «Մենք ասում ենք, որ անհատ տաքսու վարորդները ոչ մի վճար վճարելու կարիք չունեն, այսինքն՝ նրանք կարող են աշխատել առանց վճար տալու ու լիցենզիա ունենալու: Եվ այս որոշման շահառուները, չնայած որ տարբեր հաշվարկներ կան, ու հստակ չգիտենք, թե ՅՅ-ում քանի մարդ է այդ գործունեությամբ զբաղվում, բայց, ըստ տարբեր թվերի, մոտավոր 50 հազար մարդ է»: 2020-ի մարտի 25-ին, սակայն, Նիկոլ Փաշինյանը խիստ տոնայնությամբ ասեւ զգուշացնում էր, թե անհատ տաքսու վարորդները պարտավոր են լիցենզիա ունենալ: «Եթե չունի լիցենզիա, ուրեմն ինքը վարորդ չի, ու, հետեւաբար, եթե լիցենզիա չունի, չի կարող զբաղվել այդ գործունեությամբ»,- շեշտում էր գործադրի ղեկավարը: Փաստորեն, անհատ տաքսու վարորդների գլխի տակ փափուկ բարձ դնելով ու հավատացնելով, թե նրանք լիցենզիա հանելու խնդիր չպետք է ունենան, Փաշինյանն իրականում ստում էր:

**Յ**այաստանի ֆուտբոլի ֆեդերացիայում անառողջ մթնոլորտը շարունակվում է: Գաղտնիք չէ՝ Արմեն Մելիքբեկյանի՝ ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ դառնալուց հետո այդ կառույցն իրականում ղեկավարվում է ոչ թե նրա, այլ ՔՊ-ականների, իսկ ավելի կոնկրետ՝ շրջակա միջավայրի նախարար Յակոբ Սիմոնյանի կողմից, որը համակարգողն է ոլորտի: «Ժողովուրդ» օրաթերթը բազմիցս է անդրադարձել նրա եւ ընկերների կողմից բյուջեի հաշվին արտերկիր մեկնելու, կառույցի ներսում նոր կանոններ հաստատելու փորձերի մասին: Հիմա հերթը հասել է ՀՀ տեխնիկական կենտրոն ակադեմիային: Մասնավորապես, «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ակադեմիայի կուռացիայով անմիջապես զբաղվող Յակոբ Սիմոնյանի քանքերով բարձրացվել է ՀՀ տեխնիկական կենտրոն ակադեմիայում անվտանգության ծառայության համար նախատեսված գումարը՝ ամսական 7 մլն դրամից 14 մլն դրամ: Իրականում այստեղ գործ ունենք անհասկանալի կամ գուցե խիստ կանխատեսելի երեւոյթի հետ, քանի որ չի կարող անվտանգության համար նախատեսված գումարն այդպես կտրուկ բարձրանալ: Սա իր հերթին նոր իրողության է հանգեցրել, մասնավորապես՝ «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ մի քանի օր առաջ հավաքել են ակադեմիայում պարապող երեխաների ծնողներին ու հայտնել, որ վարձավճարները թանկանում են, եւ սեպտեմբերից 10 հազարի փոխարեն պետք է վճարեն 15 հազար դրամ: Իհարկէ, մենք փորձեցինք մեկնաբանություն ստանալ ՀՀ նախագահ Արմեն Մելիքբեկյանից կամ նրա մամուլի խոսնակից, սակայն, ինչպես միշտ, մեր բոլոր փորձերն անցան ապարդյուն:



**Ս**եպտեմբերի 15-ին իր լիազորությունները կստանան ՅՅ նորընտիր գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը: Եվ չնայած մնացել է մեկ ամսից էլ քիչ ժամանակ, սակայն, «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով, ներկայիս գլխավոր դատախազ Արթուր Դավթյանի հետագա ճակատագիրն անհայտ է: Շատ պլաններ չեն հաջողվել: Վերջինիս մտերիմ շրջապատից մեզ հասած լուրերի համաձայն՝ խոսակցություններ կան, որ նրա եւ քաղաքական իշխանությունների հարաբերություններում այս պահին լարվածություն կա, ուստի հայտնի չէ, թե Արթուր Դավթյանին նոր պաշտոն կտան, թե նրան հաջողություն կմաղթեն: «Ժողովուրդ» օրաթերթը Արթուր Դավթյանի ապագայի մասով մեկնաբանության համար դիմեց ՅՅ գլխավոր դատախազության լրատվական ծառայության՝ խնդրելով մեկնաբանել, թե ինչ ճակատագիր է սպասվում Արթուր Դավթյանին, սակայն այնտեղից հրաժարվեցին մեկնաբանել: Հիշեցնենք, որ Աննա Վարդապետյանը ընտրվել է միայն իշխող՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ձայների շնորհիվ, եւ չնայած Արթուր Դավթյանի թեկնածությունը եւս մեկ անգամ կարող էին առաջադրել, սակայն իշխանությունները նախընտրեցին քրեական գործերին միջամտող վարչապետի խորհրդական Վարդապետյանին:



**Օ**գոստոսի 14-ին՝ «Սուրմալու» առեւտրի կենտրոնում տեղի ունեցած պայթյունից առաջ եւ հետո, մայրաքաղաք Երևանի մարդաշատ վայրերում ռումբի մասին ահազանգերը շարունակվում են: Այս իրողությունը մոլորեցրել է ինչպես ՅՅ ոստիկանությանը, այնպես էլ ՅՅ ազգային անվտանգության ծառայության աշխատակիցները փորձում են պարզել, թե ով կամ ովքեր են այդ ռումբի մասին ահազանգողները: «Ժողովուրդ» օրաթերթին հասած լուրերի համաձայն՝ վերջին շրջանում պարբերական ահազանգերը հնչում են արտերկրից, եւ իրավապահ մարմինները անգամ դիմել են արտերկրում գտնվող իրենց գործընկերներին, որպեսզի պարզեն նրանց ինքնությունը: Հիշեցնենք, որ Գլխավոր դատախազությունը վերոնշյալ դեպքերով ՅՅ քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի հատկանիշներով (Ահաբեկչության մասին սուտ տեղեկություններ տարածելը) նախաձեռնել է քրեական վարույթ: Այս վարույթի քննությունը իրականացվում է ՅՅ ԱԱԾ քննչական դեպարտամենտում: ԱԱԾ քննչական դեպարտամենտ են փոխանցվելու նաեւ վերջին շրջանում ստացված նախկին մի քանի նման տեղեկությունների առթիվ նախաձեռնված վարույթները: Բայց մինչ նրանք քննում են, նոր ահազանգերը շատանում են:





ԻՐԱՎԻՃԱԿ

ՀԱՄՈՋՈՒՄ ԵՆ

ՄԻ ՔԱՆԻ ՕՐԻՑ ԱՂԱՎՆՈՆ ԿԼՔԵՆ

ՊԱՅԹՅՈՒՆԻ ԳՈՐԾՈՎ ՎԱՐՈՒՅԹ

Ինչպես հայտնի է, «Սուրմալու» առեւտրի կենտրոնի պայթյունի գործով քրեական վարույթ է նախաձեռնվել: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ այս օրերին նախաքննական մարմինը փնտրում է ճշտում է առեւտրի կենտրոնի տնտեսվարողների ինքնությունը, որից հետո նրանց զգուշացնում է, որ առաջիկայում հրավիրելու է հարցաքննության: Ավելին՝ մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ այս օրերին իրավապահները փորձում են պարզել, թե վերոնշյալ պահեստում որքան հրավառ նյութեր են եղել, ով է կոնկրետ շենքի պատասխանատուն, արդյոք հրավառ նյութերի դասավորվածությունը եղել է կանոնների պահպանմամբ եւ այլ նմանօրինակ հարցեր: ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության ծանր հանցագործությունների քննության բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 357-րդ հոդվածի 2-րդ մասի եւ 358-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում ձեռնարկվում են վարույթի նախնական անհետաձգելի ու մեծածավալ գործողություններ՝ «Սուրմալու» առեւտրի կենտրոնում տեղի ունեցած պայթյունի բոլոր հանգամանքները պարզելու ուղղությամբ:

Ստացված տվյալների համաձայն՝ պայթյունի հետեւանքով վնասվել են նաեւ առեւտրի կենտրոնի տարածքում գտնվող տաղավարներ, ինչպես նաեւ հարակից շինություններ եւ կայանված ավտոմեքենաներ: Դեպքի վայրում շարունակում է աշխատել քննչական խումբը. հարցաքննվել են երկու տասնյակից ավելի քաղաքացիներ, նշանակվել են համապատասխան փորձաքննություններ: Պարզվում են առեւտրի կենտրոնի տարածքում գործունեություն իրականացնող տնտեսվարողների, աշխատակիցների ինքնությունները, հանձնարարություններ են տրվել հետաքննության մարմիններին:

ԳԱՏԻ ԵՆ ՏԱԼԻՍ

Դատավորները մեկը մյուսի հետեւից դատի են տալիս Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին: ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Նաիրա Ավետիսյանը հայց է ներկայացրել դատարան՝ ընդդեմ հանձնաժողովի, մյուս դատավորը՝ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Անահիտ Թումանյանը եւս դատի է տվել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին եւ պահանջում է, որ իր ամուսնու՝ Գարիկ Յավրույանի վերաբերյալ քննված քրեական գործից բխող, հանձնաժողովի հաստատած փաստերի փոխարեն վերջինիս կողմից քրեորեն պատժելի արարքներ, այդ թվում՝ կոռուպցիոն բնույթի, կատարված չլինելը հաստատեն:

Օգոստոսի 25-ին Աղավնոյի, Բերձորի եւ Մուսի բնակիչները ողբ էլ լինել իրենց բնակավայրերը: Այս օրերին մի խումբ երիտասարդներ կազմակերպել են Աղավնոյի ինքնադատաբանությունը: Նրանք վստահ են, որ եթե զոնե 500 հոգի իրենց ընթացիկներով զնամ Աղավնո, բեկում կնցնեն: Այնտեղ մաւ բազմաթիվ մշակութային իրադարձություններ են նախատեսված:

Հետաքրքիր է, որ այս օրերին Աղավնո են այցելել բազմաթիվ պատգամավորներ թե՛ Արցախի խորհրդարանի, թե՛ Հայաստանի ընդդիմադիր խմբակցություններից: Այս օրերին իր ընտանիքով Աղավնոյում է գտնվում «Ժողովրդավարական համախմբում» կուսակցության նախագահ Սուրեն Պետրոսյանը: Նրա խոսքով՝ պատգամավորները նպատակ են ունեցել համոզել հանգիստ դուրս գալ տարածքներից:

Լաշինի միջանցքի փոփոխությունը, զինաթափման պահանջը եւ հայ բնակչության տեղահանումը ցեղասպանական գործողություն է 100 տարի առաջվա նույն մեթոդներով ու նույն դերակատարներով:

Չեն օգտագործվել նոյեմբերի 9-ից հետո մինչ այսօր հայկական խնդիրները միջազգային լեգիտիմ կառույցների քննարկմանը վերադարձնելու եւ խորհրդարանում որոշումներ ընդունելու հնարավորությունները:

Հնարավորությունները, հայկական իրավունքների փաթեթը, Հայաստանի աշխարհքաղաքական կշիռը ոչ մի տեղ չեն կորել, եւ դա լավ են հասկանում Մոսկվայում ու Բաքվում:

Որքան էլ իշխանությունները հավաստիացնում են, թե դա ամրագրված է եղել նոյեմբերի 9-ի փաստաթղթում, տեսակետ կա, որ այնտեղ ամրագրված է դրույթ միայն Շուշիի մասին, որ այդ նոր ճանապարհը պետք է շրջանցի միայն Շուշին, բայց ոչ Բերձորը կամ Աղավնո: Բացի այդ, պայմանագրում նշված է ժամկետ՝ մինչեւ 3 տարի: Այսինքն՝ դեռ 2 տարին էլ չի լրացել, Ադրբեջանն արագ կառուցել ավարտել է ու ստում է՝ դուք էլ եկեք, անմիջապես կառուցեք ու երկու շաբաթում մեզ տվեք Լաշինը:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՎՏԱՆԳԱՎՈՐ ԽՈՍՏՈՒՄՆԵՐ



Բոլորսելում եւ Մոսկվայում Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարների հանդիպում են նախապատրաստում: Այս մասին լրագրողների հետ զրույցում ասաց ՀՀԿ փոխնախագահ Արմեն Աշոտյանը: «Մենք գիտենք օրակարգը: Քանի՞ հանդիպում է տեղի ունեցել Բոլորսելում, որից հետո Ադրբեջանը ոչ մի գերի չի վերադարձրել: Փաշինյանը՝ նույնիսկ դրան չի կարողանում հասնել», - նշեց Աշոտյանը:



պարիզ պետք է շրջանցի միայն Շուշին, բայց ոչ Բերձորը կամ Աղավնո: Բացի այդ, պայմանագրում նշված է ժամկետ՝ մինչեւ 3 տարի: Այսինքն՝ դեռ 2 տարին էլ չի լրացել, Ադրբեջանն արագ կառուցել ավարտել է ու ստում է՝ դուք էլ եկեք, անմիջապես կառուցեք ու երկու շաբաթում մեզ տվեք Լաշինը: Երկրորդ՝ իրենք ճանապարհը կառուցել են գոյություն ունեցող գյուղական ճանապարհի վրա, լայնացրել, լավացրել են:

Այն Կոռնիձորի մոտից՝ սահմանի վրայից գնում հասնում է մինչեւ Լաշին, որը միատուն գնում է դեպի Շուշի: Այն Լաշինից 10-15 կմ հեռու է դեպի հյուսիս-արեւելք, ամբողջությամբ շրջանցում է այդ հատվածը: Իրենց նպատակն էլ հենց այն էր, որ Լաշինն առանձնացնեն, մաւ իրենց: Իրենք համաձայնագրի կետերը չեն կատարում, սակայն պահանջում են որ հայկական կողմն անի դա:

Ն.Գ.

Քաղաքական գործիչը վտանգավոր անվանեց ոչ այնքան ստորագրված թղթերը, որքան Փաշինյանի տված խոստումները, ինչի մասին վկայում է Բերձորի հետ պատմությունը: «Բերձորի շուրջ տեղի ունեցող գործընթացները դավաճանություն են: Երբ հասարակությունը զգուշացրեց, որ Ադրբեջանը ճանապարհ է կառուցում, իշխանությունները մեղադրեցին ընդդիմությանը արդրեջանական օրակարգին սպասարկելու մեջ», - ընդգծեց Արմեն Աշոտյանը:



ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԸ՝ +39...+41

Հանրապետության տարածքը շարունակում է գտնվել Իրաքի շրջաններից արեւադարձային տաք օդային հոսանքների ազդեցության գոտում: Այդ հանգամանքով պայմանավորված՝ օգոստոսի 15-18-ին օդի ջերմաստիճանը ցերեկային ժամերին Արարատյան դաշտում, Արագածոտնի, Վայոց ձորի նախալեռնային գոտիներում, Սյունիքի հովիտներում եւ Երեւանում կհասնի +39...+41 աստիճանի: Խորհուրդ է տրվում ժամը 11:00-ից մինչեւ 17:00-ն ընկած ժամանակահատվածում խուսափել արեւի ուղիղ ճառագայթներից:

ԱՐԱԶՄԱՆԳ՝ ՕՉԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Օգոստոսի 12-16-ը ԱԻՆ ՓԾ ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնում 7 սահանգ է ստացվել հանրապետության տարբեր տարածքներում նկատված օձերի վերաբերյալ, մասնավորապես՝ Երեւանում, Արարատի մարզի Մասիս քաղաքում, Կոտայքի մարզի Բջնի, Տավուշի մարզի Սարիգյուղ գյուղերում, Սյունիքի մարզի Կապան քաղաքում: Դեպքի վայր ժամանած փրկարարները բռնել են 2 սահնօձ, 4 շահմար, 1 իժ եւ տեղափոխել անվտանգ տարածք:



ՇԱՐԺԱՆԻԹ

ՊԱՐԶՎԵԼ ԵՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

ՀՀ ԲՆՆՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԼՈՒՈՒ ՄԱՐԳԱՅԻՆ ԲՆՆՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒՅՄԱՆ ԹՐՈՒՄԱՆ ԵՎ ԲՆՆՆԱԿԱՆ ԲԱԺՏՈՒՄ ՈՒՄԱՆԱԿԱՆ ԲՐԵՆԱԿԱՆ ՎԱՐՈՒՅՄԻ ԵՎ ԵՐԱՄԱՍԿԱՆ ԵՎ ԵՐԱՄԱՍԿԱՆ ԵՎ ԵՐԱՄԱՍԿԱՆ...

Հիշյալ դեպքի վերաբերյալ «Ավարտագրում բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունից 2022թ. օգոստոսի 15-ին՝ ժամը 20:30-ին, հարդորում է ստացվել այն մասին, որ որովայնի եւ կրծքավանդակի հրազենային վնասվածքներով իրենց մոտ է տեղափոխվել Լոուի մարզի Աքորի գյուղի 51-ամյա բնակիչ դին: Մեկ այլ հարդորում է տեղեկացվել է, որ «գլխի պատռած վերքեր, ձախ ակնակապճի վնասվածք, կրծքավանդակի սալջարդ» ախտորոշմամբ նույն բժշկական կենտրոն բուժօգնության է դիմել Հագվի գյուղի 54-ամյա բնակիչ:

Դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասով եւ 167-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով նախաձեռնվել է քրեական վարույթ, որի նախաքննության կատարումը հանձնարարվել է քննչական խմբին:

Քրեական վարույթի շրջանակներում ձեռնարկված քննչական գործողությունների արդյունքում պարզվել են Աքորի եւ Հագվի գյուղերի նշված բնակիչների՝ վնասվածքներ ստանալու հանգամանքները:

Մասնավորապես, նախաքննությամբ տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ վերջիններս դեպքի նախորդ օրը պայմանավորվածություն են ձեռք բերել՝ Հագվի գյուղի բնակիչ կողմից իր տրակտորով Աքորի գյուղի բնակիչն պատկանող խոտը հակավորելու շուրջ:

2022թ. օգոստոսի 15-ին՝ ժամը 09:30-ի սահմաններում, Հագվի գյուղի բնակիչն իր տրակտորով ժամանել է Աքորի գյուղի բնակիչին պատկանող հանդամաս, սակայն տեսնելով խոտի սակավությունը՝ հրաժարվել է հակավորել այն, ինչին ի պատասխան՝ Աքորի բնակիչն օրվա ընթացքում մի քանի անգամ զանգահարել



եւ հայտնի է Հագվի բնակիչն ու նրա ընտանիքի անդամներին, որից հետո նույն օրը՝ ժամը 18:00-ի սահմաններում, վերջինս, տանից վերցնելով իր անվամբ հաշվառված «Իժ 39» մոդելի, 12մ տրամագծով երկփողանի որսորդական ուղորկափող հրացանը, վերադարձել է նշված հանդամաս եւ երկու անգամ կրակել Աքորի բնակիչի ուղղությամբ՝ պատճառելով կյանքի հետ անահամատեղելի մարմնական վնասվածքներ, իսկ դեպքին ակաստեսները՝ տուժողի որդին եւ եղբորորդին, ձեռքբերով եւ ոտքերով բազմաթիվ

հարվածներ են հասցրել Հագվի գյուղի բնակիչին՝ պատճառելով մարմնական վնասվածքներ: Հագվի գյուղի բնակիչը, հանցանք կատարելու անմիջականորեն ծագած կասկածի հիման վրա, ձերբակալվել է, հարցաքննվել դեպքի հանգամանքների շուրջ՝ տալով խոստովանական ցուցմունք: Վերջինս որդին վարույթն իրականացնող մարմնին է ներկայացրել հանցագործության գործիք հանդիսացող որսորդական հրացանը: Նախաքննությունը շարունակվում է:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼ ԵՆ ՏՂԱՄԱՐԳՈՒՄ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ մի տղամարդը է զանգահարել ոստիկանություն եւ ասել, որ գնում է պայթեցնելու Գյումրու տարածքային հարկային տեսչության շենքը: Իրավապահները հայտնաբերել են տղամարդուն եւ տարել բաժին: Պարզվել է, որ տղամարդը ավերակի ազդեցության տակ է եղել:

ՀՐԳԵՐ

Օգոստոսի 15-ին՝ ժամը 18:43-ին, Արարատի մարզային ճգնաժամային կառավարման կենտրոն տեղեկություն է ստացվել, որ Նորաբաց գյուղի գերեզմանատան մոտ այրվում են անասնակեր եւ ավտոմեքենաներ: Այս մասին տեղեկանում ենք Արտակարգ իրավիճակների Նախարարությունից: Հրդեհի բարդության «Թիվ 2» կանչով դեպքի վայր է մեկնել ԱԻՆ ՓԾ մարզային փրկարարական վարչության հրշեջ-փրկարարական ջոկատից չորս մարտական հաշվարկ: Պարզվել է, որ հրդեհը բռնկվել է Արարատյան փողոցում գտնվող տանը եւ հարակից շինությունում: Հրդեհը մեկուսացվել է ժամը 17:40-ին, մարվել՝ 22:01-ին: Այրվել են տան տանիքի փայտե կառուցատարրերը, ազդեցիվոր՝ մասնակի (մոտ 120 քմ), հարակից շինությունում կուտակված անասնակեր (մոտ 1000 հակ), 5 պատուհան, որից 2-ը՝ մասնակի, եւ տան մոտ կայանած Chevrolet Epica մակնիշի ավտոմեքենան:

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է ԿՆՈՋ ԳԻ

Օգոստոսի 12-ին՝ ժամը 07:35-ին, ոստիկանություն ահազանգ էր ստացվել, որ Դավիթաշենի 1-ին թաղամասի 18 շենքի հետնամասում գլխի վնասվածքով կին կա գետնին ընկած: Մեկնած օպերատիվ խումբը նշված վայրում հայտնաբերել է կնոջ դիակ: Արտաքին զննությամբ դիակի վրա հայտնաբերվել են քերծվածքի հետքեր: Պարզվել է, որ մահացածը նույն թաղամասի բնակիչ 46-ամյա Արմինե Գ.-ն է: Ոստիկանության աշխատանքի արդյունքում պարզվել է, որ օգոստոսի 11-ի ժամը 20:00-ից օգոստոսի 12-ի ժամը 03:00-ն ընկած ժամանակահատվածում Դավիթաշեն թաղամասի բնակիչներ 35-ամյա, 41-ամյա եւ 39-ամյա երեք տղամարդ խեղդամահ են արել 46-ամյա կնոջը: Նախաձեռնվել է քրեական վարույթ: Երեք տղամարդիկ կալանավորվել են:

ԱՅՐՎԵԼ Է ՄԵՔԵՆԱ

Արտակարգ դեպք է տեղի ունեցել Վայոց ձորի մարզում: Արտակարգ իրավիճակների Նախարարություն ահազանգ է ստացվել, որ Երեւան-Երասխ-Մեղրի ավտոճանապարհի 133-րդ կմ հատվածում հեղուկ գազ տեղափոխող ավտոմեքենա է այրվում: Այրվում է հեղուկ գազ տեղափոխող ավտոմեքենան, եւ կրակն ու ծուխը տեսանելի են մոտ 1 կմ հեռավորությունից: Հրշեջները հեռվից են փորձում ջրով մարել կրակը: Ըստ նախնական տեղեկությունների՝ հրդեհի հետեւանքով վարորդը այրվածքներով տեղափոխվել է «Եղեգնաձոր» բժշկական կենտրոն: Ոստիկանությունն ու քննչական բաժինը պարզում են վարորդի ինքնությունը:

ԶՈՐՏԵՐԻ ԹՎԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՈՉ ՄԱՐՏԱԿԱՆ ԿՈՐՈՒՄՏՆԵՐ

Ազգային ժողովի «Պահվ ունեն» խմբակցության ղազանավոր Տիգրան Աբրահամյանը ներկայացրել է Չինված ուժերում օգոստոս ամսվա առաջին կիսամյակի ոչ մարտական կորուսների վիճակագրությունը:

«Ոչ մարտական կորուստների վիճակագրությունն են նայում, որը եւս տեղով ողբերգություն է բանակի ու երկրի համար: 15 օրում 5 ոչ մարտական զոհ:

Եվս 2 զոհ Պաշտպանության բանակն ունեցել է օգոստոսի սկզբին՝ Ադրբեջանի նախաձեռնած ագրեսիայի ժամանակ:

Շուրջ 2 տասնյակ տարբեր հանգամանքներով պայմանավորված վիրավորումներ՝ ՀՀ-ում եւ Արցախում, այդ թվում ոչ մարտական պայմաններում:

Օգոստոսի 3-ի լույս 4-ի գիշերը քնած ժամանակ հանկարծամահ է եղել ՀՀ ՊՆ Ն զորամասի եռամսյա վարժական հավաքի մասնակից, պահեստազորային շարքա-

յին Ատոմ Ռազմիկի Հարությունյանը (ծնվ. 1978թ.):

Օգոստոսի 7-ին արտակարգ դեպք է տեղի ունեցել Գեղարքունիքի մարզում: Ժամը 16:00-ի սահմաններում Արտակարգ իրավիճակների Նախարարության փրկարար ծառայության 911 ճգնաժամային կառավարման կենտրոն ահազանգ է ստացվել, որ Գեղարքունիքի մարզի Ծովակ գյուղի վարչական շրջանում՝ Սեւանա լճում լողալիս ջրահեղձ է եղել մի քաղաքացի:

Ավելի ուշ պարզվել է, որ վերոնշյալ քաղաքացին եռամսյա զորահավաքի մասնակից է, ով այդ պահին դեռեւս անհայտ պայմաններում գտնվել է այդ տարածքում:

Օգոստոսի 7-ին հանկարծամահ է եղել Ն զորամասի պայմանագրային զինծառայող, շարքային Արշալույս Վռամի Հովհաննիսյանը (ծնվ. 1976 թիվ):

Օգոստոսի 9-ին հանրապետության հյուսիսարեւելյան ուղղությամբ տեղակայված Ն զորամասի կրակային դիրքում հայտնաբերվել է պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Էրիկ Արմենի Ղարայանի (ծնվ. 2003թ.) դին՝ կրծքավանդակի շրջանում հրազենային վիրավորումով:

Տարվում է քննություն՝ դեպքի հանգամանքները լիարժեք պարզելու համար:

Օգոստոսի 14-ին՝ ժամը 15:20-ի սահմաններում, կտրուկ վատթարացել է ՀՀ ՊՆ Ն զորամասի պայմանագրային զինծառայող, շարքային Մանվել Մյասնիկի Թադեոսյանի (ծնվ. 1981թ.) ինքնազգացողությունը: Չնայած անմիջապես ցուցաբերված բժշկական օգնությանը՝ զինծառայողի կյանքը փրկել չի հաջողվել:

Նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն՝ մահվան պատճառը պարզելու համար», - մանրամասնել է պատգամավորը:

● Ըստ ոստիկանության տվյալների՝ օգոստոսի 15-ից 16-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 54 դեպք, որոնցից 4-ը՝ նախկինում կատարված:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԼՈՒՐԵՐ

ՃԱՆԱՊԱՐՀԱԵԶՐԻ ՓԱԿ ԶՈՒԳԱՐԱՆՆԵՐ



Դիլիջան-Սեւան ավտոմոբիլային թունելի մուտքի մոտ գտնվող զուգարանի դռները փակ են: Նույն կերպ ամուր կողպված են Նաեւ Իջեւան-Նոյեմբերյան ավտոճանապարհին գտնվող զուգարանի դռները: Երբեմն կարելի է տեսնել միջպետական ավտոճանապարհի եզրին իրենց բնական փոքր կարիքները հոգացող վարորդների եւ ուղեւորների: Տարիներ առաջ Տավուշի մարզով ձգվող միջպետական ավտոճանապարհի եզրին զուգարաններ սարքեցին, կահավորվեցին, սակայն կարճ ժամանակ անց թալանվեցին, դրանց սանհանգույցները ջարդվեցին, եւ այդ ժամանակից զուգարանները փակ են: Բնական կարիքները հոգալու հարմար տեղը ճանապարհի եզրին գործող ԱԳԼԾԿ-ների զուգարաններն են: Տավուշի մարզում շատ են պատմական հուշարձանները, հոգեւոր կենտրոնները՝ Զաղարծինը, Գոշավանքը, Մակարավանքը եւ այլն, ուր ամեն տարի հազարավոր արտասահմանցի զբոսաշրջիկներ են այցելում, նրանց համար ճանապարհի եզրին՝ անտառում բնական կարիքները հոգալու անսովոր է: Ծանապարհների եզրերին հասարակական զուգարանների բացակայությունը տուրիզմի զարգացման արգելակ է:

ՕԳԻ ԱԳՏՈՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԵՐ

«Սուրմալու» առեւտրի կենտրոնի պայթյունի ազդեցության գնահատման համար օգոստոսի 14-15-ին լրացուցիչ նմուշառում է իրականացվել մուտակ տարածքից, որոշվել են մթնոլորտային օդում ծծմբի եւ ազոտի երկօքսիդների պարունակությունները. այս մասին հայտնում են Հիդրոօդերութաբանության եւ մոնիթորինգի կենտրոնից: Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիան գերազանցել է համապատասխան սահմանային թույլատրելի կոնցենտրացիան (ՍԹԿ) 4.6 անգամ, ազոտի երկօքսիդի կոնցենտրացիան՝ 2.6 անգամ: Մայրաքաղաքի մթնոլորտային օդի որակը, ըստ ստացողներ կայանների տվյալների, օգոստոսի 15-16-ին եղել է՝ ● Կենտրոն համայնքի մթնոլորտային օդում փոշու կոնցենտրացիան գերազանցել է համապատասխան ՍԹԿ-ն 1.4 անգամ, ազոտի երկօքսիդի կոնցենտրացիան՝ 1.6-1.8 անգամ, ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիան՝ 1.1-1.3 անգամ, ● Նոր Նորքում համայնքի մթնոլորտային օդում փոշու կոնցենտրացիան գերազանցել է համապատասխան ՍԹԿ-ն 1.4 անգամ, ազոտի երկօքսիդի կոնցենտրացիան՝ աննշան:

ՀՆՈՒՑ ԵԿՎԱԾԸ

ԿՈՄԻՏԵԻ ԴԵԿԱՎԱՐԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

Արմեն Ղուլարյանը դեռևս 1976 թվականից գրադեցում է դեռևս 1976 թվականից: Այժմ նա ՀՀ ֆաղափառության կոմիտեի ղեկավարն է:



ArmLur.am-ը ուսումնասիրեց նրա ներկայացրած տարեկան հայտարարագրերը: Նշենք, որ Ղուլարյանը 2011 թվականին գրադեցել է Տավուշի մարզպետի պաշտոնը: Այսպես, Ղուլարյանի դրամական միջոցները 2011 թվականին կազմել են 12 մլն դրամ, 45 հազար դոլար: Այդ տարի նա 20 հազար դոլար է նվեր ստացել: Որպես եկամուտ հայտարարագրել է սեփական աշխատավարձը, որը տարեկան կազմել է 2 մլն 288 հազար դրամ: Ղուլարյանի դրամական միջոցները 2012 թվականին կազմել են 40 հազար դոլար, 12 մլն դրամ, 2013-ին՝ 12.5 մլն դրամ եւ 45 000 դոլար, 2014-ին՝ 44 հազար դոլար, 12 մլն դրամ, 2015-ին՝ 48 հազար դոլար, 12 մլն դրամ, 2016-ին՝ 12 մլն դրամ, 50 հազար դոլար, 2017-ին՝ 12 մլն 800 հազար դրամ եւ 54 000 դոլար, 2018-ին՝ 13 մլն 200 հազար դրամ եւ 54 500 դոլար:

Նա 2018-ին ստացել ամսական 417 հազար դրամ աշխատավարձ եւ կենսաթոշակ: Բացի այս, Ar2Lur.am-ը տեղեկացավ, որ Ղուլարյանն Իջեւանում ունի մեկ առանձնատուն, որը ժառանգություն է ստացել 2013-ին: 2019-ին Երեւանի կենտրոնում 21 մլն 475 հազար դրամով գնել է մեկ կիսակառույց: Բանկային հաշվին առկա գումարը կազմել է 606 հազար դրամ գումար, իսկ կանխիկ գումար Ղուլարյանն ունեցել է 4.6 մլն դրամի եւ 45 հազար 800 դոլարի չափով: Նա որպես եկամուտ հայտարարագրել է սեփական աշխատավարձը, որը կազմել է 848 հազար դրամ: Ստացել է ամսական 52 հազար դրամի չափով կենսաթոշակ:

այդ շրջանում Ղուլարյանը Քաղաքաշինության կոմիտեի նախագահի առաջին տեղակալն էր: Նախորդ տարի բանկային հաշվին Ղուլարյանն ունեցել է ավելի քան 3 մլն դրամ, կանխիկ գումարը՝ 4 մլն 900 հազար դրամ, 25000 դոլար: Քաղաքաշինության կոմիտեի ղեկավարի ամսական աշխատավարձը նախորդ տարի կազմել է 1 մլն 27 հազար դրամ, իսկ կենսաթոշակը՝ 59 հազար դրամ: Ղուլարյանի կինը՝ Սիլվա Սկրտումյանը, տարիներ առաջ մեկ ընկերությունից 1 մլն 200 հազար դրամի չափով շահաբաժին է ստացել: Սիլվա Սկրտումյանի՝ 2021 թվականի տարեկան հայտարարագրում նշված է, որ Իջեւանում ունի հասարակական նշանակության մեկ շինություն: Բացի այս, Արաբկիր վարչական շրջանում ձեռք է բերել բնակարան: Պաշտոնային կինն ունի 2007 թվականի արտադրության Toyota

մակնիշի ավտոմեքենա, որը նա գնել է 2007-ին: Նախորդ տարեվերջին նա ունեցել է 800 հազար դրամի եւ 900 եվրոյի չափով կանխիկ գումար: Ծախսերի հայտարարագիր ամսականները չեն ներկայացրել: Ղուլարյանը ՀՀ զինված ուժերի փոխգնդապետ է, բայց բանակում չի ծառայել, համեմայնդեպս, իր կենսագրության մեջ նշված չէ այդ մասին: Ղուլարյանը ՀՀ ամենաերկարակյաց մարզպետն է. ղեկավարել է Տավուշի մարզը 1999 թվականից մինչև 2014 թվականը՝ ամբողջ 15 տարի: Այս ժամանակահատվածում տավուշցիները դժգոհ են եղել նրա աշխատանքից: Նրանից հատկապես դժգոհել են սահմանամերձ, մշտապես թշնամու կրակահերթերի տակ գտնվող գյուղերի բնակիչները, որովհետև մարզպետի «վեջին էլ չի եղել», թե ինչ է կատարվել իր մարզում: Ավելին՝ տեղացիների պատմելով՝ նա շատ գյուղերի ճանապարհն էլ չի իմացել: ՆՅՈՒՆԷ ԴԱՍԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՌՈՒՄԲԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՄԱԿԱՐԳՎԱԾ, ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԱՐԱԶԱՆԳԵՐ

Կեղծ ահազանգերը չեն բացահայտվում սուբյեկտիվ եւ օբյեկտիվ դասճանաչումով: Այս մասին խոսել է ԱԾՆ ճախարհի ղեկավար Միխայել Համբարձումյանը՝ անդրադարձնալով վերջին օրջանում դայթուցիկ նյութերի սեղանադրման մասին կեղծ ահազանգերին: Նրա խոսքով՝ զանգահարողը ձգտում է ամեն ինչ անել, որպեսզի իր զանգը քողարկվի, իսկ ազգային անվտանգության գործառնություն էլ այն է, որ իրենք էլ փորձեն տեխնիկական հնարավորություններով գտնել զանգահարող անձնավորությանը: «Օբյեկտիվ պատճառն այն է, որ տեխնիկապես չեն կարողանում գտնել, իսկ սուբյեկտիվ՝ մարդկանց խելքը չի կտրում: Զանգահարողի խնդիրն այն է, որ ինքը չբացահայտվի, իսկ հատուկ ծառայությունների գործն էլ այն է, որ տեխնիկական հնարավորություններով գտնեն զանգահարողին: Հետեւելով ռումբերի մասին պարբերական դարձած զանգերին՝ տպավորություն է, թե նույն ձեռագիրն է: Վարկածներից մեկն էլ կարող է

այն լինել, որ դա անում է նույն մարդը կամ մարդկանց մի խումբ»,- նշեց ԱԾՆ նախկին ղեկավարը: Այսպիսի ահազանգերը, ըստ Համբարձումյանի, չեն կարող անհետանալ մտալ, քրեական գործեր են հարուցվում, նախաքննություն է իրականացվում, որից հետո պարզվում է զանգեր կատարելու դրդապատճառը: «Ես մեր տղաներին իմանալով կարող եմ ասել՝ իրենք ձգտում են այդ ամենը բացահայտել, իսկ թե ինչու չեն կարողանում, ուրիշ հարց է»,- ասաց Համբարձումյանը: ԱԾՆ նախկին ղեկավարը նշեց, որ նախկինում էլ նման դեպքեր եղել են, սակայն այսպիսի համակարգված ու պարբերական բնույթ դրանք չեն կրել: «Այդքան տարի մենք պարզել ենք կեղծ ահազանգողների ինքնությունը, հիմա չգիտեմ ինչու չի արվում դա»: Հարցին՝ տեխնիկապես հնարավոր է արդյոք նույն օրվա ընթացքում 4-5 վայրում ռումբի մասին ահազանգ լինի, ու ընդամենը 4 ժամ հետո պատասխանատու կառույցները հայտարարեն, թե ահազանգերը կեղծ

են, Միքայել Համբարձումյանն ասաց. «Եթե ուժերը բավարարել են, ու այդ ժամանակում պարզել են, լավ է, իսկ եթե չճշտված հայտարարություն են արել, օրենք են խախտել: Այդպիսի պատասխանատվության տակ խելացի ղեկավարը չէր մոռնի»: Համամիտ է այն տեսակետին, թե պարբերական դարձած ռումբերի մասին ահազանգերով երկրում փորձում են կառավարել նշեց. «Այսինքն՝ երկրում ուզում են քառու ստեղծել, որ ինչ անեն, իրենց մութ գործերը կարգավորեն: Դժվար է ասել. դա վարկած է, որը պետք է քննության առարկա դառնա: Իսկ ինչու՞ չէք մտածում, որ հակառակորդ պետությունն է անում: Ամեն ինչ հնարավոր է»: Իսկ մեր երկիրն արդյոք անվտանգության առումով խոցելի վիճակում չէ՞. հարցին ի պատասխան՝ Համբարձումյանն ասաց, որ հաշվի առնելով մեր երկրի ներսում եւ երկրի շուրջ տեղի ունեցող իրադարձությունները՝ մենք ունենք լրջագույն անվտանգային խնդիրներ: Ն.Գ.

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 10 ՃՏՊ. 1 մարդ զոհվել է, 15-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿԱՐՑԵՆ 2 ՄՏԱՐՏԱՓԵՐ

Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) ձեռնարկային և նորարարական տեխնոլոգիաների կենտրոնը (EPIC) և Ձեռնարկային աշխարհի գավաթի (EWC) համակարգավորման փուլերը շարունակում են EWC 2022-ի հայաստանյան ազգային եզրափակչում մրցակցներ նվաճած թիմերին:

EWC-ի ազգային փուլի արդյունքում, անկախ ժյուրիի որոշմամբ, երկու հայկական ստարտափներ՝ TexInPayMe-ը և HopShop-ը, ճանաչվեցին հաղթող: Վերջիններս Հայաստանը կերպարացնեն EWC միջազգային եզրափակչում և կապարարեն 1 միլիոն դոլար մրցանակային ֆոնդի համար:

Ըստ Ձեռնարկային աշխարհի գավաթի հայաստանյան ազգային համակարգող Նոնոնի Հովհաննիսյանի՝ անցյալ տարվա համեմատ՝ այս տարվա մասնակիցները ավելի զարգացած և պատրաստված էին, այդ իսկ պատճառով ժյուրիի ընտրությունը եզրափակչին չափազանց դժվար է եղել: «Ուրախ եմ, որ ազգային ընտրության արդյունքում ունենք միջազգային մասշտաբով բավականին մրցունակ երկու թիմ»:

Մրցույթի ազգային փուլի եզրափակիչը տեղի ունեցավ Հայաստանի ամերիկյան համալսարանում օգոստոսի 13-ին: Միջոցառմանը ելույթ ունեցան Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության (US2U) գործադիր տնօրեն Հայկ Չոբանյանը, Համաշխարհային ձեռնարկության ցանցի (GEN) նախագահ Զոնաթան Օրթանյանը, ՀԱՀ-ի պրոռեկտոր դոկտոր Բրայան Ա. Էլիստը և ՀԱՀ-ի ձեռնարկության և նորարարական տեխնոլոգիաների կենտրոնի (EPIC) տնօրեն դոկտոր Մայքլ Քուչակյանը: Պատվերային քննարկման ընթացքում ստարտափ էկոհամակարգի մասնակիցները քննարկում ունեցան Հայաստանում ստարտափ էկոհամակարգի հատուկացման թեմայով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածով՝ հրապարակվում է Արտոն Մանվելի Ուլիխանյանի պարտատերերի պահանջների նախնական ցուցակը:

1. «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի պահանջի չափը՝ 6.969.537,10 ՀՀ դրամ /հերթը՝ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «է» կետ /չափափովված//,
2. «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի պահանջի չափը՝ 451.142,40 ՀՀ դրամ /հերթը՝ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի /ապահովված//,
3. «Հայթիզնեսբանկ» ՓԲԸ-ի պահանջի չափը՝ 2.393.315,80 ՀՀ դրամ /հերթը՝ «Մասնկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «է» կետ /չափափովված//:

Սույն պահանջների կամ դրանց առաջնահերթության վերաբերյալ գրավոր առարկությունները յոթ օրվա ընթացքում պետք է ներկայացվեն ՀՀ մասնկության դատարան՝ ք. Երևան, Օտյան 53/2 հասցեով: Կառավարչի մոտ դեպոնացված սույն պահանջին ծանոթանալու համար կողմերը կարող են դիմել կառավարիչ Վ. Ասատրյանին: Հեռ.՝ +37494187008:

ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐՈՐՏՆԵՐԸ ԴԺԳՈՂԵԼ ԵՆ ԿՇԵՌՔՆԵՐԻՑ

Բեռնասար մեքենաների վարորդները երեկ՝ օգոստոսի 16-ին, փակել էին Գորիս-Սիսիան ճանապարհը, առաջ ուժգին ծանուցանակ անց՝ սարածխային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գևորգ Մանուկյանի հետ քննարկումից հետո, բացել են այն:

Նախարարի մամուլի քարտուղար Սուհան Գարուբունյանն ասաց, որ վարորդները դժգոհել են ճանապարհների տեղադրված կշեռքերից, որոնք այդ ճանապարհահատվածում տեղադրվել են մի քանի օր առաջ: Եթե բեռնատարների բեռը սահմանված չափից ավելի է, ապա վարորդները տուգանվում են:

«Նախարարը աշխատանքային այցով Կոռնիձորի և Տաթև-Աղվան ճանապարհների աշխատանքներին հետեւելու համար էր գտնվում Սյունիքի մարզում, Գևորգ Մանուկյանը հանդիպել էր նաև Գորիս-Սիսիան ճանապարհահատվածի փակված վարորդների հետ, որոնք դժգոհել են ճանապարհների տեղադրված կշեռքերից: Մի քանի օր է՝ Հայաստանի տարածք մտնելու բեռնատարները կշռվում են, գերբեռնված բեռնատարները տուգանվում են ու պարտավորվում են բեռը հասցնել սահմանված չափի: Վարորդները պահանջում են սահմանված թույլատրելի առավելագույն 26 տոննա զանգվածը դարձնել 28 տոննա: Նրանք 4 կետից բաղկացած պահանջներ են ներկայացրել նախարարին: Պայմանավորվածություն է ձեռք բերվել ճանապարհը բացել և Երեւանում նախարարի, վարորդներին և Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ներկայացուցիչների մասնակցությամբ քննարկում անցկացնել, որից հետո պարզ կլինի՝ որքանով են վարորդների առաջարկներն ընդունելի», - ասաց Սուհան Գարուբունյանը:

Ըստ նախարարի մամուլի քարտուղարի՝ վերջին շրջանի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ճանապարհները, այդ թվում՝ Տաթև-Աղվանը, հիմնականում



վնասվում են հենց գեոմետրաբեռնված բեռնատարների պատճառով: «Կառավարության մակարդակով շատ խիստ պահանջ էր դրված ապահովել այդ նորմերի պահպանումը», - ասաց Սուհան Գարուբունյանը:

Հիշեցնենք՝ դեռ մայիսի 17-ին, Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմինը իրազեկել էր, որ տրանսպորտային միջոցների թույլատրելի առավելագույն զանգվածի կամ մեկ տնու վրա ընկնող բեռնվածքը, ինչպես նաև մեծ եզրաչափերի առավելագույն չափերը փոխվել են:

Ըստ այդմ երկու տնի ունեցող մեխանիկական տրանսպորտային միջոցների թույլատրելի առավելագույն զանգվածը պետք է լինի 18 տոննա, 3 տնի ունեցող մեխանիկական տրանսպորտային միջոցների դեպքում՝ 25 տոննա, 3 տնի ունեցող մեխանիկական տրանսպորտային միջոցը, որի տանող տնու վրա տեղադրված են զույգ անվաղողեր և օդաճնշական կամ նմանատիպ այլ կախոց, կամ երբ յուրաքանչյուր տանող տնու վրա տեղադրված

են զույգ անվաղողեր և յուրաքանչյուր տնու առավելագույն բեռնվածությունը չի գերազանցում 9,5 տոննան, ուստի տրանսպորտային միջոցների թույլատրելի առավելագույն զանգվածը պետք է լինի 26 տոննա:

4 տնի ունեցող մեխանիկական տրանսպորտային միջոցների թույլատրելի առավելագույն զանգվածը պետք է լինի 32 տոննա, եթե 2 ուղղորդող տնիներով են, երբ տանող տնու վրա տեղադրված են զույգ անվաղողեր և օդաճնշական կամ նմանատիպ այլ կախոց, կամ երբ յուրաքանչյուր տնու վրա տեղադրված են զույգ անվաղողեր և յուրաքանչյուր տնու առավելագույն բեռնվածությունը չի գերազանցում 9,5 տոննան:

3 տնի ունեցող մեխանիկական տրանսպորտային միջոցի (3 տնի ունեցող կցորդով) թույլատրելի առավելագույն զանգվածը պետք է լինի 40 տոննա, 3 տնի ունեցող մեխանիկական տրանսպորտային միջոցի (2 կամ 3 տնի ունեցող կիսակցորդով) թույլատրելի առավելագույն զանգվածը պետք է լինի 40 տոննա:

ԼՈՒՐԵՐ

ԿԱՍԵՑՎԵԼ Ե ԱՐՏԱԳՐԱՄԱՍԸ

ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի որոշմամբ՝ կասեցվել է «ՂԻԵՏ» ՍՊԸ-ին պատկանող կաթնամթերքի արտադրամասի (Լոռու մարզ, քաղաք Վանաձոր) առանձին գործառնությունը: Կասեցման հիմքը «Կաթի եւ կաթնամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջների խախտումն է, որը հայտնաբերվել է լաբորատոր փորձաքննությամբ:

«ՍՍՏՄ Լոռու մարզային կենտրոնի տեսուչները նշված կաթնամթերքի արտադրությունում իրականացվող վերահսկողության ընթացքում կատարել են նմուշառում «Մածուն» և «Պանիր» արտադրատեսակներից եւ հանձնել լաբորատոր փորձաքննության: Արդյունքում պարզվել է, որ «Պանիր» արտադրատեսակի նմուշը «ԱՑԽՄ», իսկ «Մածուն» արտադրատեսակը հակաբիոտիկի՝ ստրեպտոմիցինի ցուցանիշներով չեն համապատասխանում սահմանված նորմերին: Խախտումների վերացման համար սահմանվել է ժամ-

կետ», - ասվում է ՍՍՏՄ հաղորդագրության մեջ:

ԽԵՂԱՄԻՏ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄՆԵՐ

ՀՀ կառավարության՝ 2022 թվականի օգոստոսի 11-ի N 1265-Ն որոշմամբ՝ սահմանվել է Խելամիտ հարմարեցումներ ապահովելու կարգը, որում մեծ դեր է վերապահված կրթության ոլորտում համընդհանուր ներառականության ապահովմանը՝ որպես կրթական քաղաքականության առաջնային ուղղություն: Որոշումն ուժի մեջ կմտնի 2023 թվականի հունվարի 1-ից:

Խելամիտ հարմարեցումները նախատեսված են այն անձանց համար, որոնք ունեն հաշմանդամությամբ պայմանավորված ֆունկցիոնալության սահմանափակում ուսումնական գործընթացին մյուսների հետ հավասար հիմունքներով մասնակցություն ցուցաբերելու առումով: Խելամիտ հարմարեցումներ ապահովելու պարագայում անձը կկարողանա բավարար կատարել գործողությունները,

որոնք պարտավոր է կատարել, կամ ակնկալվում է, որ կկատարի ուսումնական հաստատություն ընդունվելիս ուսումնական գործընթացին մյուսների հետ հավասար մասնակցելու համար:

Խելամիտ հարմարեցումների համար կարող է դիմել անձը (երեխաների դեպքում՝ օրինական ներկայացուցիչը), ինչպես նաև «Կրթության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով սահմանված դիմորդը ուսումնական հաստատություններ ընդունելության գործընթացի, իսկ սովորողը՝ ուսումնական հաստատությունում սովորելու ամբողջ ընթացքում:

Համապատասխան կարիք ունեցող անձն իրավունք ունի ստանալ խելամիտ հարմարեցումներ՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից, անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից:

«Հոդվոր» օրաթերթում եւ Armlur.am կայքում զովագր, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:







### ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

**ՀԱՐՑ. Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ ՀՀ-ում օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց, օտարերկրյա դեսուբյուրում մշտադառն բնակվող ՀՀ քաղաքացիների միմյանց եւ ՀՀ քաղաքացիների հետ ամուսնության գրանցման համար, ի՞նչ ժամկետներ են գործում:**

Վարդան Սիմոնյան (41 տարեկան)



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց, օտարերկրյա պետությունում մշտապես բնակվող ՀՀ քաղաքացիների միմյանց եւ ՀՀ քաղաքացիների հետ ՀՀ-ում ամուսնություն գրանցելիս անհրաժեշտ է ներկայացնել անձնագիրը եւ տվյալ պետության իրավասու մարմինների կամ դեսպանության (հյուպատոսության) կողմից տրված ընտանեկան կարգավիճակը հաստատող փաստաթուղթ (տեղեկանք, թույլտվություն, հայտարարություն եւ այլն)՝ վավերացված ՀՀ արտաքին գործերի նախարարության դիվանագիտական կամ հյուպատոսական մարմիններում, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ միջազգային պայմանագրերով: Օտարերկրյա պետության իրավասու մարմինների կողմից տրված փաստաթուղթը եւ քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի՝ անձը հաստատող փաստաթուղթը թարգմանվում են հայերեն լեզվով՝ օրենքով սահմանված կարգով: Ամուսնության պետական գրանցումն իրականացվում է դիմումը ներկայացնելու օրվան հաջորդող 10-րդ օրը: ՀՀ-ում օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց, օտարերկրյա պետությունում մշտապես բնակվող ՀՀ քաղաքացիների միմյանց եւ ՀՀ քաղաքացիների հետ ամուսնության գրանցման մասին թույլտվությունը սահմանված ժամկետից շուտ ստանալու համար անհրաժեշտ է վճարել կառավարության որոշմամբ սահմանված լրացուցիչ արտաբյուջետային գումար:

**ՀՀ արդարադատության նախարարություն**

- «ԺՈՂՈՎՈՒՐԳ».** Լրացուցիչ արտաբյուջետային գումար վճարվում է հետեւյալ դրույքաչափերով.
- մեկից երկու աշխատանքային օրվա ընթացքում (օրը որոշվում է դիմողների ցանկությամբ)՝ 150.000 ՀՀ դրամ,
  - երեքից հինգ աշխատանքային օրվա ընթացքում (օրը որոշվում է դիմողների ցանկությամբ)՝ 120.000 ՀՀ դրամ,
  - յոթերորդ աշխատանքային օրվա ընթացքում՝ 50.000 ՀՀ դրամ:

Էջը՝ ՆԱԻՐԻԱ ՀՈՎՅԱՆՆԻՍՅԱՆԻ

### ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

**ՀԱՐՑ. Որո՞նք են խնամասարության սահմանված ժամկետները:**

Վարդուհի Նանայան (34 տարեկան)



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Խնամատարությունը կարող է լինել կարճաժամկետ եւ երկարաժամկետ՝ մինչեւ երեխայի չափահաս դառնալը: Կարճաժամկետ խնամատարությունը կիրառվում է մինչեւ մեկ ամիս ժամկետով, անհրաժեշտության դեպքում՝ եւս մեկ ամիս երկարաձգելու հնարավորությամբ, եթե սույն օրենսգրքով առավել սեղմ ժամկետ նախատեսված չէ: Կարճաժամկետ խնամատարության ժամկետի ավարտից հետո, եթե հնարավոր չէ երեխային վերադարձնել կենսաբանական կամ խնամակալի ընտանիք, իսկ խնամատար ընտանիքը պատրաստ է շարունակել երեխայի խնամքը եւ դաստիարակությունը, ապա նախապատվությունը տրվում է նույն ընտանիքում խնամատարության ժամկետը երկարաձգելու:

Երկարաժամկետ խնամատարությունը կիրառվում է մեկ տարի եւ ավելի ժամկետով: Երկարաժամկետ խնամատարության պայմանագրի երկարաձգում թույլատրվում է, եթե երեխայի վերադարձն ընտանիք կամ երեխայի որդեգրումը կամ խնամակալությունը (հոգաբարձությունը) հնարավոր չէ:

**ՀՀ աշխատանքի**

**եւ սոցիալական հարցերի նախարարություն**

**«ԺՈՂՈՎՈՒՐԳ».** Նախնական ընտրված խնամատար ծնող դառնալ ցանկացող անձի կողմից երեխայի ճգնաժամային կամ արձակուրդային խնամատարությունն իրականացնելու մասին սկզբնական համաձայնություն ստանալու դեպքում աշխատակազմը մեկ օրվա ընթացքում տեղեկացնում է երեխայի բնակության վայրի խնամակալության եւ հոգաբարձության մարմնին նախնական ընտրված խնամատար ծնող դառնալ ցանկացող անձի եւ երեխայի հանդիպումը կազմակերպելու նպատակով:

### ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում



Հրազդանի կիրճում «Փարվանա» ռեստորանային համալիրի հարեւանությամբ, միմյանց են բախվել 45-ամյա Հայկ Մոսյանի վարած Mercedes մակնիշի եւ 27-ամյա Յուլյա Հայրապետյանի վարած Toyota Camry մակնիշի ավտոմեքենաները: Բարեբախտաբար, տուժածներ չկան:

### ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը  
Բաժանորդագրվելու  
համար կարող եք դիմել

**«Հայմամուլ» ՓԲԸ**  
հեռ. 45-82-00, 45-19-11

**«Հայփոստ» ՊՓԲԸ**  
հեռ. 51-45-46, 51-45-47

**«Բլից-Մեդիա» ՍՊԸ**  
հեռ. 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:



Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադարձնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

**ԱՌԱՋԱՐԿ**  
**հայկական տպագիր մամուլից**

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

**Բաժանորդագրության բլանկ**

Անուն՝ \_\_\_\_\_  
Ազգանուն՝ \_\_\_\_\_  
Առաքման հասցե՝ \_\_\_\_\_  
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ \_\_\_\_\_

Հեռ.՝ (060) 490049  
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.



**«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը.**  
**«Շարունակությունը կարող էք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:**

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ  
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22՝/3, հեռ.՝ 010 54-64-23  
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03U089086  
տրված է 24.11.2010  
Ստորագրված է տպագրության 16.08.2022  
Պատկերը հարցազրույցից է. 4 հարցում, 4 հարցում 2021

Գլխավոր խմբագիր՝  
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆՂ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: